

ԽԱՀԱՏՈՒ ԿԵՍԱՐԱՑՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՎԱՆԴԷ

ԱՅԾԵՄԻԿ ԿՈՐԿՈՏՅԱՆ

Խաչատուր վարդապետը ժամանակակիցների գրառումներում ներկայացված է մի շարք դրվատական բնութագրումներով ու գնահատություններով. «ամենաշնորհ արեղայ» (Գրիգոր Դարանագցի), «քաղցրաբան վարդապետ» (Ցուցակ, Բ, 33), «ընտրեալն ի բազմաց և գովեալն ի բնաւից, գլուխ եկեղեցոյ և յառաջ երգս երգոց պաշտաման, վարդ կարփերծեան ի մէջ բուրաստանի արևելեան, ճառագայթն տէր Խաչատուր» (Ցուցակ, Բ, 137), «տիեզերալոյս վարդապետ» (Ցուցակ*, Ա, 750), «յոգնահանճար և բազմարուեստ Խաչատուր վարդապետ Կեսարացի» (Ղուկաս Գառնեցի) և այլն: Այս վկայակոչությունները չեն հաստատում և ոչ էլ մերժում են Խաչատուր Կեսարացու գրական վաստակի հնարավորությունը: «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» երկհատոր ամփոփիչ հրատարակության ցանկում նրա անունը չի հիշատակվում¹, և այնուամենայնիվ «յոգնահանճար և բազմարուեստ» գործիչը ուշ միջնադարի գրական նորմերով ապրող միջավայրում հազիվ թե իր «քաղցրաբան» լինելը չկիրառեր նաև բանաստեղծական արվեստում: Եվ հիրավի, Ն. Ջուղայի ս. Ամենափրկիչ վանքի առաջնորդներին ներկայացնելիս Դ. Տեր-Յովհանյանը Խաչատուրի «բանագիտությունը» վկայելու համար բերում է նրա ամբողջական մեկ ծայրակապ բանաստեղծությունը²: Այն խնամքով մշակված ներբողյան է, որի սկզբնատառերը հողում են «Գիրգոր վարդապետի», - իսկ տողավերջում «Խաչատուր ծառայես»: Պիտի ենթադրել, թե ձեռագրական այն նախօրինակը, որից ընդօրինակել է Դ. Տեր-Յովհանյանը (հավանաբար Մկրտիչ եպս. Աղավնունին նրանից տեղեկանալով է հիշատակում բանաստեղծությունը)³, ուղեկցող թվական է ունեցել՝ 1627թ.: Խոսքը, անշուշտ, Գիրգոր Կեսարացու նշանավոր գործչի ու նաև բանաստեղծի մասին է⁴: Խաչատուր Կեսարացին աշակերտել է երեք նշանավոր անձանց՝ Գրիգոր Կեսարացուն, Մովսես Տաթևացուն և Գրիգոր Կամախեցուն: Ցավոք, սկզբնաղբյուրները հնարավորություն չեն տալիս մասնավորեցնելու, թե ո՞ր տարիներին է Գրիգոր Կեսարացու ուսուցչապետության դպրոցում սովորել: Ա. Ալպոյաճյանը «Կեսարացի» վերադիրը կրելու փաստից եզրակացնում է, թե ուսումնառությունը կատարվել է 1595-1601 թվականներին⁵, սակայն հազիվ թե 1590-ին ծնված Խաչատուրը 5-10 տարեկան հասակում հայրենի Կեսարիայում կարողանար վարդապետի աշակերտել: Թերևս, ավելի հավանական է կարծել պատանեկան տարիքում Կ. Պոլսում Գրիգորի մոտ սովորած լինելու հնարավորությունը: Անշուշտ, չի կարելի բացառել Ա. Ալպոյաճյանի երկրորդ ենթադրությունը ևս, ըստ որի խոսքը կարող է ոչ թե անմիջական աշակերտ լինելուն վերաբերել, այլ Գրիգորի՝ իր իրական ուսուցիչ Մովսես Տաթևացու ուսուցիչը լինելու պարագային, ինչպես որ Դակոբ կաթ. Ջուղայեցին է իրեն Գրիգոր Կեսարացու աշակերտ նկատում⁶: Կարևորը, սակայն, այնքան այս կենսագրական մանրամասնությունը չէ, որքան գրական ավանդույթի արմատավորումը ուշ միջնադարյան միջավայրում. «Գիտելի է, զի մարդն երեք»՝ ծնունդ ունի. նախ ի հօրէ և ի մօրէ, երկրորդ՝ շնորհօք սուրբ աւագանին, երրորդ՝ աշխատութեամբ վարժապետաց», - ամփոփում է Խաչատուր Կեսարացու ուսուցիչ Մովսես Տաթևացին⁷: Եվ հիրավի, Մովսեսը հինգ բաժնից բաղկացած ծայրակապ ընդարձակ մի ողբ է գրել իր ուսուցիչ Սրապիոն կաթ. Ռոհայեցու մահվան առթիվ՝ այն ավարտելով վերևում վկայակոչված խոսքի չափածո տարբերակով

*Նուստ աշակերտացն և չեմ անուանի,
Ստեղծ գառուցեալ մանուկ թարշամի,*

¹ Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVIIդդ.): Երկու հատորով, հ. Ա. աշխատասիրությամբ Դասմիկ Սահակյանի, Երևան, 1986, հ. Բ, Երևան, 1987:
² «Ցուցակ» կրճատմամբ հղում ենք Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի ձեռագրական հավաքածուի նկարագրությունը, Ա. հատոր (Ս. Տեր-Ավեսիսյան), Բ հատոր (Լ. Մինասյան):
³ *Յարութին Տեր Յովհաննանց*, Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, հատոր, երկրորդ, Նոր Ջուղա, 1881, էջ 22-24:
⁴ Տես. նրա Միաբանք և այցելութ Յայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, է. 91:
⁵ Գիրգոր Կեսարացուն նվիրված մենագրական ուսումնասիրություն տես Ա. Ալպոյաճեան, Գիրգոր Կեսարացի Պատրիարք եւ իր ժամանակը: Իր մահուան երեքհարիւրամեակի առթիւ, Երուսաղէմ, 1936: Բանաստեղծական ժառանգության գիտական հրատարակումը կատարել է Դասմիկ Սահակյանը (տես «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը»), հատ. Բ, էջ 9-33 (բնագիր) 664-667 (ծանոթագրություններ), 737-738 (կենսագրություն):
⁶ Նշվ. աշխ., էջ 222-223: 1601 թվականից հետո շուրջ մեկ տասնամյակ Գրիգոր Կեսարացին Կիպրոսի, Եգիպտոսի և Երուսաղեմի վանքերում էր: Բացառված չէ այդ շրջագայության միջոցին աշակերտած լինելու հնարավորությունը:
⁷ Ա. Ալպոյաճեան, նշվ. աշխ., էջ 223:
⁸ Դ. Ն. Ակինեան, Մովսես Գ. Տաթևացի, էջ 409:

*Կերակուր կարծրագոյն չէ ինձ ուտելի,
Կաթին փափագիմ մօրն իմ ծնողի*:*

Իր ուսուցիչներին ներբողներ ծնելու և մահը բանաստեղծությամբ սգալու առումով ուշ միջնադարի բանաստեղծների շարքում բացառիկ տեղ է զբաղեցնում ինքը՝ Գրիգոր Կեսարացին. նա Գրիգոր Սրապիոն կաթ. Ռոհայեցուն ընդարձակ ու սրտառուչ մի քանի բանաստեղծություն է նվիրել՝ «Ներչափական ներբողեան», «Գանձ» և «Ողբ»⁸: Ուստի զարմանք չպիտի հարուցի Գրիգոր Կեսարացուն իրենց ուսուցիչ ճանաչողների ծգտումը նրա հանդեպ ունեցած մեծարանքը, ըստ դարի սովորության, հանգավոր խոսքով արտահայտելու փորձը: Խնդիրն այն է, թե այդ կարգի նյութերը աղբյուրագիտականից զատ գեղարվեստական հետաքրքրություն ներկայացնում են: Ինքնին հասկանալի է, որ փաստական հասցեագրումն ու «ներչափական» ծայրակապ լինելը նշանակալի արհեստականություն են հաղորդում երգին և մի տեսակ կնիղապարի մեջ առնում խոսքի արտահայտչականությունը:

Հնարանքի իմաստով Խաչատուր Կեսարացու «Ներբողեանը» առանձնանում է մի ինքնատիպ հանգավորմամբ, փաստորեն, սկզբնատառերի ծայրակապը ներկայացված է երկտողի առաջին տողով, մինչդեռ տողավարտի ծայրակապը երկտողում նույնագիր է: Այսպես՝

*Գերադրական բարեաց գլուխ՝ գերագոյն ըմպեալ քաղցր[աբ]ու/ւ,
բազմաբեղուն ծառ երկնուղէ՜ բարգաւաճեալ առատաբու/ւ:
Դաբունապետ տանս Արամայ՝ ղամեալ ազգիս մեր անիմա/ւ,
արդիւնարար և ուսուցող*՝ ըստ Սահակա և Մեսրոպբա:*

Քերականական ու բառազանձային որոշ արհեստականություն այստեղ էլ կա (Սահակա և Մեսրոպբա, քաղցրուխ), բայց ասելիքը հստակ է՝ «Խաւարելոյս ուսուցիչը» նուրբ և արտաքին գրոց գիտակ է («պատմող նրբից և արտաքնոց»), որի լեզուն գրչի պես սուրբ է («լեզու քո սուրբ իբր զգրիչ»), այսինքն բանավոր խոսքը նույնքան ընտիր է, որքան գրչով գրածը: Հեղինակը համարձակություն ունի համեմատելու գրական ու իմաստասիրական ամենաբարձր հեղինակությունների հետ.

*Պատիարակ մտաց մարդկան՝ վարժեալ յիմաստս գերակա/ւ
Արիստոտէլը և Պլատոնը համեմատեալ Հիպոկրատա/ւ:
Լթենականն հանճարով հասեալ նոցին կէտ և կաճա/ւ,
եւ գերազանց գու քան զբնաւս՝ կրթեալ ի յիրս բան և պատճա/ւ:*

Իր ժամանակի և միջավայրի գրական չափանիշներով Խաչատուր Կեսարացին, անշուշտ, օժտված բանաստեղծ է, «բանասաց», ինչպես կոչում է նրան հիշատակագիրներից մեկը: Եթե ելակետ ունենաք այս կարգի հնարավոր դատողությունները, ապա, թերևս, կարելի է մտածել, թե նրա գրական արդյունավետությունը չափտի սահմանափակվեր այս եզակի նշումով, սակայն մեր պրպտումները նախորդ բանասերների կատարածի վրա բան չավելացրին: Կեսարացուն անկարելի է նույնացնել ժամանակակից մեկ այլ Խաչատուր վարդապետի հետ, որը նաև հեղինակ է «Քառասուն զանցանս, որ ես գործեալ եմ...» մեղայական կրկներգով և «Խաչատուր վարդապետ» ծայրակապով բանաստեղծության, որովհետև այս երկրորդ Խաչատուր վարդապետի չափածոն պահպանվել է 1611 թվականի գրչության ձեռագրում⁹, երբ մեր Խաչատուրը դեռ չէր վարդապետացել:

Քանի որ «Գերադրական բարեաց գլուխը» Խաչատուր Կեսարացու մեզ հասած միակ չափածո գործն է և գեղարվեստական հետաքրքրությունից ոչ պակաս բանասիրական-աղբյուրագիտական խնդիրներ է հրահրում, անհրաժեշտ ենք նկատում մասնակի սրբագրություններ կատարել և նորացյալ տեսքով բերել ամբողջությամբ.

*Գերադրական բարեաց գլուխ՝ գերագոյն ըմպեալ քաղցր[աբ]ու/ւ
բազմաբեղուն ծառ երկնուղէ՜ բարգաւաճեալ առատաբու/ւ.
Դաբունապետ տանս Արամայ՝ ղամեալ ազգիս մեր անիմա/ւ,
արդիւնարար և ուսուցող՝ ըստ Սահակայ և Մեսրոպբա.
Ի բարեմոյն ազանց սերեալ՝ խաւարալոյս լուսաւորիչ,
պատմող նրբից և արտաքնոց՝ լեզու քո սուրբ իբր զգրիչ:
Գերաշխարհիկ տէր իմ տինա, գեղաղէշիդ սիրտ իմ բաղձա/ւ,
որպէս ցանկայր արքայն Դաւիթ ըմպել ջրոյն Բեթղաիիմա/ւ:*

⁸ «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը», Բ, էջ 77:

⁹ Նրանց բոլորի բնագրերը տես «Ուշ միջնադարի Հայ բանաստեղծությունը», Բ- էջ 9-33:

¹⁰ Տես Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, հատ. Ա, էջ 382-384, 646-699:

* Տպագիր տեքստում վրիպմամբ գրված է «ուսոցիղ»:

Ով սխրալի հայր պատուական, որ Սերովբեից ես համեմատ,
 ես թարմատարս և ապարճնս հիմ երգեցից տեառնդ իմ դրուատ:
 Բամեալ ազանց Հայկազնից՝ խնամածու ըստ հոր գթո,
 հանդիսադիր դու և մարզիչ, հաստակառոյց վեմ հաւատո:
 Վարուքդ սուրբ, գործով մաքուր՝ ըստ Եղիայի և Յովհաննու,
 տեսականաւ պայծառացեալ՝ ասպետափառ ակնդ արևու:
 Ապենիազ վեհիդ անծին՝ ո՞ր դրուատե բան քեզ յարմար,
 սակայն ոգէ պաճարեղէնս հռետորիդ իբր զտխմար:
 Դոտից քննող մասանց բանի՝ յաբունապետ ես կատարած
 այնքան դու՝ հայրդ իմ սրբասնած, որ քեզ չհասին չարին արկած:
 Դաստիարակ մտաց մարդկան, վարժեալ յիմաստս գերակա,
 Արիստոտելդ և Պղատոնդ, համեմատեալ Հիպոկրատա:
 Աթենականն հանճարով՝ հասեալ նոցին կէտ և կաճառ,
 ևս գերազանց գոլ քան զբնաւս՝ կրթեալ ի յիրս բան և պատճառ:
 Պետ պատուական Պահլաւունեա՝ պարետ կարգեալ արամենիա,
 իբր զՄովսէս և զԱհարոն՝ տուեալ ազգիս Իսրայէլա:
 Երանելոյ հորդ մերոյ ցանկան մանկունք եկեղեցւոյ/
 և փափագին սրբութեան քո՝ իբր եղջերու յաղբերս ջրոյ:
 Տիասս մտօք զսա տուայտ, տարակցեալս երեխայրէ:
 Ոչ որպէս պարտն է վճարե, այլ զսէր սրտին ըղձակերտէ:
 Իսկ դու, սուրբ հայրդ իմ ըստ հոգւոյս, և ուսուցիչ իմ ըստ մարմնոյս,
 Խանդաղատեա՝ քոյս, հիքոյս՝ միշտ յիշելով ի սուրբ յաղօթս:

Այսպիսով պարզվում է, որ 17-րդ դարի մշակութային և հոգևոր առավել խոշոր գործիչներից մեկի՝ Խաչատուր Կեսարացու անունը տեղ չի գտնում միջնադարյան հայկական պոեզիայի՝ գոյություն ունեցող ժողովածուում: Սակայն նրա ժամանակակիցների և աշակերտների անդրադարձներում խոսվում է գեղարվեստի բնագավառում նրա բացառիկ ստեղծագործական օժտվածության մասին, որը պետք է արտացոլվեր նաև պոեզիայում: Եվ իսկապես, Նոր Զուղայի հայ գաղթօջախի պատմության մասին Հ. Տեր-Հովնանյանցի երկհատոր կոթողային աշխատության մեջ իր բանաստեղծական գովաբանությամբ տեքստն է բերում ծայրագույն վարդապետ Գրիգորի աշակերտ Խաչատուր Կեսարացին: Տեքստի վերլուծությունը ցույց է տալիս, որ բանաստեղծությունը գաղտնագրող հեղինակի անունը գտնվում է բանաստեղծի վերին բառերի հորիզոնականում: Հեղինակը վարպետորեն օգտագործում է անվանական ժանրը (աքրոստիկոս): Բնագիրը մենք վերարտադրել ենք որոշ բնագիտական ճշգրտումներով:

ԲԱՅՐՈՆԸ ԵՎ ՄԻՒԹԱՐՅԱՆՆԵՐԸ ՉԱՐԼՁ ԴԱՌՄԵԹԻ ԳԼԱՇԱՏՄԱՐԻ

ՌՈՒՉԱՆ ԱՈՒԲԵԼՅԱՆ

Հայագիտության պատմությունն Անգլիայում ունի դարավոր պատմություն: Տակավին 1736թ. Ուիսթոն եղբայրները թարգմանել են Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունը» գրաբարից լատիներեն և երկու լեզվով միաժամանակ հրատարակել Լոնդոնում: 1901թ. Բրիտանական Ակադեմիայի հիմնադրումից ի վեր, դերկոմս Ջեյմս Բրայսը ըստ արժանվույն է ներկայացրել հայերենի ուսումնասիրությունն ակադեմիայում, իսկ Ֆրեդերիկ Քոնիքերը շարունակել է նույն գործը: 1965 թ. Անգլիայի Օքսֆորդի համալսարանում հիմնվեց հայագիտական ամբիոն, որտեղ երկար տարիներ մեծ նվիրյալ Չարլզ Դաուսեթը ծավալեց դասական հայերենի ուսումնասիրությունը և ուսուցումը: Նրա գրչին են պատկանում «The Madman Has Come Back Again», «Byron and Armenian» («Խենթը նորեն եկավ», «Բայրոնը և հայերենը») աշխատությունը՝ ծոցված լորդ Բայրոնի ծննդյան 200-ամյակի հիշատակին: Բայրոնը և հայերը թեմայով գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, սակայն Չարլզ Դաուսեթի ուսումնասիրությունն աչքի է ընկնում իր նորարարությամբ, հարցադրումների ինքնատիպությամբ, դիտարկումների հետաքրքրությամբ: Ներկա հետազոտությունը անգլիացի հայագետի մեկնաբանման առաջին ներկայացումն է մեզանում:

1816 թ. լորդ Բայրոնը այցելում է Վենետիկի Սուբբ Ղազար կղզին՝ Մխիթարյանների միաբանության վանքը: Գրադարանի հարուստ ձեռագիր մատյանները, թագուհի Սլքեի պատվերով 862թ. ծաղկած Ավետարանը և այլ մասունքներ հմայում են Բայրոնին, և խնդրում է վանահայրերին իրեն հայերեն սովորեցնել: 1816 թ. դեկտեմբերի 5-ին նա գրում է Ջոն Մարրեյին. «Ես զգում եմ՝ միտքս ուզում է բախվել ապառաժ ժայռի: Այդ ապառաժը հայերենն է. որպես ամենախրթին բան, որպեսզի չարչարի ինձ, դարձնի համակ ուշադրություն»³:

Անձնական անհաջողություններից հարկադրված նա՝ կամավոր տարագրվել էր Անգլիայից և որպես մխիթարանք, հաստատուն հեմակետ էր որոնում հայերենի մեջ: Հարություն Ավգերյանը և Սուքիաս Սոմալյանը՝ Բայրոնի ուսուցիչները, նրան ուղիղ տարան դեպ այն ապառաժը, որին կամենում էր բախվել Բայրոնի միտքը: Հայերեն սովորելու ցանկությունն, անշուշտ, նաև այլ լուրջ պատճառ ուներ: Նա կամենում էր կարդալ հայ միջնադարյան քնարերգության և մատենագրության բնագրերը և ապա ծանոթանալ օտար լեզուներից հայերեն թարգմանված արժեքավոր գրվածքներին, որոնց նախօրինակները կորել էին առիվեմ և հայերեն թարգմանություններն ունեին բնագրի արժեք: Ահա թե ինչ է գրում Թոմաս Մուրին, 1816 թ. դեկտեմբերի 5-ին. «Վանքում կան շատ զարմանահրաշ ձեռագիր մատյաններ, գրքեր և թարգմանություններ հուներենից, որոնք հիմա կորած են, նաև պարսկերենից, ասորերենից և այլ լեզուներից, ներառյալ ազգային մշակույթը»⁴:

Թե որքան է հաջողվել Բայրոնին տիրապետել հայերենին, ակնհայտորեն երևում է «Անգլիայի բանաստեղծների ընտրանի» հրատարակության «Լորդ Բայրոնի հայերեն վարժանքներն ու պոեզիան» ենթախորագրի մեջ: Ընդգրկված են թարգմանած հատվածներ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ից, նաև հայերեն հնչյունների անգլերեն տառադարձմամբ երկու էջանոց բնօրինակը, որը ներկայումս պահպանվում է Լոնդոնի Ջոն Մարրեյ ՄՊԸ գրադարանում: Այնտեղ է գտնվում նաև հայերեն ձեռագիր տառերի պատմությունը, որը գրառել է Բայրոնը: Վկայակոչված են V դարի ձեռագիր մատյաններ: Ահա մի գողտրիկ հատված Բայրոնի նկարագրությամբ. «Վռամշապուհի թագավորության օրոք՝ 5-րդ դարում, մի գիտուն հայ այր՝ Մեսրոպ Մաշտոցը, ստեղծեց այբուբենը՝ կազմված 36 տառից: Մինչ այդ հայերն օգտվում էին սիրիական, պարսկական կամ հունական տառերից: 12-րդ դարում ավելացան ևս երկու տառ՝ Օ, Ֆ: Տառերի գյուտից ի վեր, հայերը դադարեցին օգտագործել օտար տառեր: Ապա այլադավանների, նաև քրիստոնյաների կողմից միտումնավոր ոչնչացվեցին բազում ձեռագիր մատյաններ՝ կամենալով ջնջել հեթանոս շրջանին վերաբերող բոլոր վկայությունները: Հայերը մինչ այդ ունեցել են հարուստ, մշակված գրականություն...»⁵: Սուրբ Ղազար կղզում Բայրոնն անգլերեն է թարգմանել Ավգերյանի «Քերականություն հայերեն և անգլերեն» ձեռնարկը՝ ստանձնելով հրատարակման ծախսը: Ավգերյանը խտալերեն լեզվով կազմել է մեկ այլ «Քերականություն հայերենի համար» Բայրոնի թարգմանությամբ և համահեղինակությամբ: (Առաջին հրատարակությունը 1833 թ.): 1817թ. մարտի 2-ին Բայրոնը գրում է Ջոն Մարրեյին. «Մենք ուզում ենք իմանալ տարակությունը 1833 թ.): 1817թ. մարտի 2-ին Բայրոնը գրում է Ջոն Մարրեյին. «Մենք ուզում ենք իմանալ Անգլիայում, Օքսֆորդում, Քեմբրիջում կամ այլ տեղ հայերեն տպագրություններ կա՞ն: Ուիսթոնները Անգլիայում հրատարակել են «Հայոց պատմության» գրաբար բնագիրը, իրենց իսկ լատիներեն թարգմանությամբ: Արդյոք պահպանվե՞լ են օրինակներ և որտե՞ղ: Թախանձագին խնդրում եմ տեղեկացիր քո ծանոթ գիտականից»⁶: Բայրոնը «Քերականություն» գրքի համար Մխիթարյան հայրերի խնդրանքով գրել է առաջաբան: Ահա մի հատված.

«Այս մարդիկ քրիստոնյա, ազնիվ և ճնշված ազգ են: Տարեգրության մեջ, թերևս, հազիվ թե գտնվի մի ազգ, որ ավելի անթիվ լինի ոճիրներից, քան հայ ազգը, որի առաքինությունն է եղել խաղաղությունը, իսկ մեղքը՝ բռնադատվածությունը: Բայց ինչպիսին էլ եղած լինի նրանց ճակատագիրը, իսկ դա դառն է եղել, և ինչպիսին էլ լինի հետագայում, նրանց երկիրը առիվեմ պետք է լինի ամենահետաքրքիրներից մեկը